ՀԱՎԵԼՎԱԾ

Հաստատված է նոր խմբագրությամբ

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ Տնօրինության

31.08.2023թ. թիվ 69-Լ որոշմամբ

Ուժի մեջ է 04.09.2023թ.

ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԵՆԻՇԱՅԻՆ/ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ (ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ)

ՆԱԽԱԳԾԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐ

Պայման	Վարկ
Նվազագույն/ Առավելագույն գումար	20,000,000 - 3,000,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք այլ արժույթ
Նվազագույն/ Առավելագույն ժամկետ/տարի	1-12
Առավելագույն արտոնյալ ժամկետ/տարի	2
	Անվանական տոկոսադրույք[1]
ՀՀ դրամով ֆիքսված տոկոսադրույք Փոփոխական տոկոսադրույք (25-րդ ամսից սկսած)[2]	14.00%-16.00% 13.25%- 14.00%
ԱՄՆ դոլարով ֆիքսված տոկոսադրույք Փոփոխական տոկոսադրույք (25-րդ ամսից սկսած)[2]	9.50%- 11.00% 9.00- 10.50%
Եվրոյով ֆիքսված տոկոսադրույք Փոփոխական տոկոսադրույք (25-րդ ամսից սկսած)[2]	8.00- 9.50% 7.00- 8.00c%
ԳՀՀ ՎԷՋԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ	
Արժույթ	ՀՀ դրամ, լիցենզավորված մինչև 5 ՄՎտ կայանների համար՝ ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո
Տարեկան անվանական տոկոսադրույք – ֆիքսված	ՀՀ դրամ - 8.5% - 9.5%, ԱՄՆ դոլար – 5.0% - 5.5% /լիցենզավորված կայանների համար/ Եվրո - 5.0% - 5.5% /լիցենզավորված կայանների համար/
Նվազագույն/ Առավելագույն ժամկետ՝տարի	1-10 տարի, լիցենզավորված մինչև 5 ՄՎտ կայանների համար՝1-12 տարի
Նվազագույն/ Առավելագույն ժամկետ/տարի՝տարի	Մինչև 1 տարի
Վարկի տրամադրման միջնորդավճար	0.5 %

ՎԶԵԲ-ի GCF-GEFF ARMENIA ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ	
Նվազագույն/ Առավելագույն գումարը	30,000 - 3,000,000 ԱՄՆ դոլար
Նվազագույն/ Առավելագույն ժամկետ/տարի	2-5
Առավելագույն արտոնյալ ժամկետ/տարի	1
	Անվանական տոկոսադրույք
ԱՄՆ դոլարով ֆիքսված տոկոսադրույք	8.50%-9.50%
Հատուկ պայմաններ	• Ծրագրի ներքո բոլոր ներդրումները պետք է ուղղված լինեն էներգախնայողության/ռեսուրսի խնայողության բարձրացմանը /ածխաթթու գազի արտանետման կրճատում նվազագույնը 20 տոկոսի չափով կամ ապահովեն ջրային ռեսուրսի 20% և ավել խնայողություն/ և բավարարեն Ծրագրով սահմանված պայմաններին, • Էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի ոլորտներում ներդրումների խրախուսման նպատակով որոշ նախագծերի համար (ոչ արդյունաբերական արևային ՖՎ էլեկտրակայանների, արևային ջրատաքացուցիչների, կենսագազի արտադրության և երկրաջերմային էներգիայի կայանների ձեռքբերում/կառուցում) Ծրագրի կողմից կարող է տրամադրվել դրամաշնորհ ներդրումային ծախսերի առանց ԱԱՀ արժեքի մինչև 20 տոկոսի չափով, որը որոշվում է Ծրագրի խորհրդատուների կողմից իրականացվող ուսումնասիրությունների արդյուքների հիման վրա: • Ծրագրի ներքո չեն կարող ֆինանսավորվել ՎԶԵԲ-ի բացառությունների ցանկով սահմանված գործունեություն իրականացնող կազմակերպությունները: Ծրագրի ներքո ֆինանսավորման ենթական չեն նաև հողի գնումը, կարճաժամկետ ներդրումները անշարժ գույքի ոլորտում (օրինակ՝ բնակելի կառուցապատումը, վերաֆինանսավորումները), ինչպես նաև ՀՀ տարածքից դուրս իրականացվող ներդրումները:
% հաշվարկման կարգը	%-ը հաշվարկվում է վարկի գումարի նվազող մնացորդի նկատմամբ՝ հիմք ընդունելով տարին 365 օր: ՎԶԵԲ Ծրագրերի համար՝ 360 օր
Տրամադրման եղանակը	Անկանխիկ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ» (R2E2)-Ի ԿԱՅՈՒՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ	
Արժույթ	ՀՀ դրամ
Առավելագույն գումար	40,000,000 ՀՀ դրամ
Տարեկան տոկոսադրույք	Սկսած 9.0%-ից
Առավելագույն ժամկետ	Մինչև 96 ամիս
Արտոնյալ ժամկետ	Մինչև 12 ամիս

Թիրախային ոլորտներ	Համայնք, Ֆիզիկական անձ, Իրավաբանական անձ
Հիմնական ուղղություններ	Էներգախնայող միջոցառումներ, Վերականգնվող էներգիայի սարքավորումներ, Էներգախնայող սարքավորումների ձեռք բերում
Վարկային գործիքի տեսակ	Վարկ, Չվերականգնվող վարկային գիծ
Վարկի տրամադրման միջնորդավճար	0.5%
Այլ պայմաններ	- Ծրագրերը պետք է ունենան էներգաարդյունավետության 15% և բարձր ցուցանիշ, -Իրավաբանական անձնանց ծրագրերը ֆինանսավորվում են նախագծի արժեքի մինչև 80%-ի չափով, սակայն ոչ ավել, քան 40,000,000 ՀՀ դրամ, -Վարկավորումը իրականացվում է միայն «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ» (R2E2)-ի կողմից ծրագրի վերաբերյալ դրական եզրակացության առկայության դեպքում
Տրամադրման եղանակը	Անկանխիկ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԲՈԼՈՐ ՎԱՐԿԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ	
Մարման կարգ	ամսական անուիտետային/ հավասարաչափ վճարներ, սեզոնային գրաֆիկ, հնարավոր է վարկի գումարի մարման արտոնյալ ժամանակաշրջան մինչև 24 ամիս: Վարկի տոկոսագումարները վճարվում են ամսական պարբերականությամբ
Ապահովություն	անշարժ գույք, հիմնական և շրջանառու միջոցներ, բաժնեմասեր/ բաժնետոմսեր, երրորդ անձանց երաշխավորություններ
Վարկ/գրավ առավելագույն սահմանաչափ	70%
Կանխավճար/ Նախագծին սեփական մասկանցության չափ	Նախագծերի ֆիննասնավորման դեպքում սեփական ներդրումների մեծությունը պետք է կազմի ընդհանուր ներդրումների առնվազն 30 տոկոսը
Տրամադրման միջնորդավճար՝ Նվազագույն վճարը վճարվում է վարկային հայտը ներկայացնելու պահին: Վարկը հաստատվելու դեպքում լրացվում է պակաս վճարված գումարը, իսկ մերժվելու դեպքում՝ վերադարձվում է առանց որևիցե պահումների	• 0.5%, նվազագույնը 100,000 դրամ
Գրավի ապահովագրության պահանջ	Բանկի պահանջով, առնվազն վարկի մնացորդի չափով
Ապահովագրության մոտավոր տարեկան	• Անշարժ գույքի տարեկան ապահովագրավճարը կազմում է գույքի արժեքի 0,15-0,3 տոկոսը

ծախսը/ %	• Սարքավորումների համար տարեկան ապահովագրավճարը կազմում է գույքի արժեքի 0.2-0.5 տոկոսը, • Շրջանառու միջոցների համար տարեկան ապահովագրավճարը կազմում է գույքի արժեքի 0.3-0.5 տոկոսը, • Տրանսպորտային միջոցների համար տարեկան ապահովագրավճարը սկսվում է տրանսպորտային միջոցի արժեքի 2,5 տոկոսից:
Գրավի գնահատում	Ըստ պահանջի՝ բանկի հետ համագործակցող անկախ գնահատող կազմակերպության կողմից
Գրավի գնահատման մոտավոր ծախս յուրաքանչյուր գույքային միավորի համար	• Բնակելի հատվածի գույքի գնահատման համար սկսած 15,000 ՀՀ դրամից • Ոչ բնակելի հատվածի գույքի գնահատման համար՝ սկսած 25,000 ՀՀ դրամից • Տրանսպորտային միջոցների գնահատման համար՝ սկսած 8,000 ՀՀ դրամից մանրամասն տեղեկատվություն ստանալու համար տես Բանկի հետ համագործակցող մասնագիտացված գնահատող կազմակերպությունների ցանկը
Վարկի գումարի մարման կետանցի դեպքում օրական տույժ՝ % մարման ենթակա գումարից	0.1%
Տոկոսագումարի մարման կետանցի դեպքում օրական տույժ՝ % մարման ենթակա գումարից	0.1%
Ժամկետանց վարկի գումարի նկատմամբ հաշվարկվող տոկոսադրույք	նախատեսված է ՀՀ Քաղ. Օրենսգրքի 411 հոդվածի պահանջներով
Վաղաժամկետ մարման դեպքում տույժ մարվող գումարից (վարկային գծի դեպքում տույժը հաշվարկվում է սահմանաչափի գումարից)	• Մինչև վարկի պայմանագրային ժամկետի 1/2 – 3% չափով, վարկի պայմանագրային ժամկետի 1/2 լրանալուց հետո– 1% չափով • Վաղաժամկետ մարման տույժ կարող է չսահմանվել, սակայն տվյալ դեպքում վարկավորման տոկոսադրույքը կբարձրացվի առնվազն 1 տոկոսային կետով
Մոնիթորինգի գործողություններին խոչընդոտելու դեպքում՝ տուգանք	100,000 ՀՀ դրամ
Վարկի գումարը կամ դրա մի մասը ոչ նպատակային օգտագործելու դեպքում՝ տույժ	Ոչ նպատակային օգտագործած գումարի 10%-ի չափով
Գործող պայմանագրի (վարկային, գրավի, բանկային երաշխիքի տրամադրման, այլ) պայմանների փոփոխություն/ վերանայում	Մինչև 50,000 ՀՀ դրամ *Գործող պայմանագրի փոփոխություն են համարվում առնվազն հետևյալ դեպքերը, եթե այլ դեպքերի համար առանձին որոշում չկայացվի Բանկի Վարկային Կոմիտեի կողմից՝* • *վարկային պայմանագրով սահմանված մարումների ժամանակացույցի վերանայումը, եթե նշվածի համար նախատեսված չէ վաղաժամկետ մարման համար սահմանված տույժի վճարում,* • *հաճախորդի դիմումի համաձայն վարկային պայմանագրի այլ պայմանների (տոկոսադրույք, վարկի նպատակ, տարամադրման եղանակ և այլն) փոփոխությունը,* • *հաճախորդի դիմումի համաձայն ապահովության, այդ թվում՝ գրավի կամ երաշխավորության պայմանագրի հիմնական պայմանների փոփոխությունը, գրավի կամ երաշխավորության վաղաժամկետ ամբողջական կամ մասնակի ազատումը և այլն:*

	Սակագինը չի տարածվում այն պայմանագրերի փոփոխության վրա, որոնց փոփոխությունը մեկ այլ պայմանագրի փոփոխության հետևանք է:
Վարկի տրամադրման որոշումը կայացնելու ժամկետը	հաճախորդի կողմից պահանջվող բոլոր փաստաթղթերը բանկին տրամադրելուց 20 աշխատանքային օրվա ընթացքում
Վարկի տրամադրման որոշման մասին հաճախորդին տեղեկացում	2 աշխատանքային օր
Վարկը փաստացի տրամադրելու ժամկետը	հաճախորդի կողմից վարկի ձևակերպման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց 3 աշխատանքային օրվա ընթացքում
Հաստատված/ դեռ չտրամադրված վարկի պայմանների վերանայում	Մինչև 50,000 դրամ
Գրավի ձևակերպում	● նոտարական վճար – միանվագ 13.000-25.000 ՀՀ դրամ՝ անշարժ գույքի դեպքում, ● անշարժ գույքի գրավի իրավունքի գրանցման վճար՝ առավելագույնը 26.400 ՀՀ դրամ ● Տրանսպորտային միջոցի գրավադրման դեպքում կատարվող վճար (միասնական տեղեկանքի և շարժական գույքի գրավադրման համար) – միանվագ 5.000 ՀՀ դրամ

[1]- Արտահանող ընկերություններին տրամադրվում են հավելյալ զեղջեր և արտոնություններ

[2]- Փոփոխական դրույքաչափով տոկոսադրույք սահմանելիս Բանկը յուրաքանչյուր դեպքում պայմանագրով սահմանում է փոփոխական հիմնական ցուցանիշը (ՀՑ), որի փոփոխությամբ պայմանավորված են լինելու հետագա դրույքաչափի փոփոխությունները, ինչպես նաև բանկի մարժան՝ հաստատուն բաղադրիչը: Փոփոխական հիմնական ցուցանիշների սահմանման և տոկոսադրույքի վերանայման կանոնները հետևյալն են՝

ՀՀ դրամով վարկերի դեպքում 25-144 ամիսների համար ՀՑ1*(հիմնական ցուցանիշ), +(1.50%-3.00%), հիմնական ցուցանիշի անհասանելիության դեպքում ՀՑ11(երկրորդային ցուցանիշ)+(4.00%-5.00%)

ՀՑ1-ն (Հիմնական ցուցանիշ ՀՀ դրամով տրամադրվող վարկերի համար) ՀՀ պետական արժեկտրոնային 6 ամսվա պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության կորի տոկոսադրույքն է, որն արտացոլվում է https://www.cba.am/am/SitePages/fmofinancialmarkets.aspx էջում: Եթե հիմնական ցուցանիշը դառնում է անհասանելի, և անհնարին է դառնում լողացող տոկոսադրույքի սահմանումը հաջորդ ժամանակահատվածի համար, ապա հիմք է ընդունվում երկրորդային ցուցանիշը՝ ՀՏ21, որն իրենից ներկայացնում է ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակվող ՀՀ առևտրային բանկերի կողմից ներգրավված 181 օրից-1 տարի ժամկետայնությամբ դրամային ավանդների միջին կշռված տոկոսադրույքը, որն արտացոլվում է https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx - էջում:

Վարկի լողացող տոկոսադրույքը ՀՀ դրամի դեպքում՝ կարող է փոփոխվել (բարձրանալ կամ նվազել) հաստատված տոկոսադրույքից առավելագույնը 4%-ով (առավելագույն և նվազագույն շեմ):

ԱՄՆ դոլարով վարկերի դեպքում 25-144 ամիսների համար ՀՑ2* (հիմնական ցուցանիշ) + (4.25%-6.00%), հիմնական ցուցանիշի անհասանելիության դեպքում ՀՑ21(երկրորդային ցուցանիշ) + (6.25%-8.00%)

ՀՑ2-ն (Հիմնական ցուցանիշ ԱՄՆ դոլարով տրամադրվող վարկերի համար)
ԱՄՆ Գանձապետական ուղենիշային պարտատոմսերի 6 ամսվա մինչև մարում եկամտաբերության կորի տոկոսադրույքը, որն արտացոլվում է https://www.treasury.gov/resource-center/data-chart-center/interest-rates/Pages/TextView.aspx?data=yield էջում:
Եթե հիմնական ցուցանիշը դառնում է անհասանելի, և անհնարին է դառնում լողացող տոկոսադրույքի սահմանումը հաջորդ ժամանակահատվածի համար, ապա հիմք է ընդունվում երկրորդային ցուցանիշը՝ ՀՏ21 որն իրենից ներկայացնում է ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակվող ՀՀ առևտրային բանկերի կողմից ներգրավված 181 օրից մինչև 1 տարի ժամկետայնությամբ դոլարային ավանդների միջին կշռված տոկոսադրույքը, որն արտացոլվում է https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx - էջում:
Վարկի լողացող տոկոսադրույքը ԱՄՆ դոլարի դեպքում՝ կարող է փոփոխվել (բարձրանալ կամ նվազել) հաստատված տոկոսադրույքից առավելագույնը 3%-ով (առավելագույն և նվազագույն շեմ):
Եվրոյով վարկերի դեպքում25-144 ամիսների համար ՀՑ3 (հիմնական ցուցանիշ) + (48.50%-510.750%) հիմնական ցուցանիշի անհասանելիության դեպքում ՀՑ31(երկրորդային ցուցանիշ) +(58.00%5-610.250%)
ՀՑ3-ն (Հիմնական ցուցանիշ Եվրոյով տրամադրվող վարկերի համար) Եվրոպական դրամական շուկայի ինստիտուտի կողմից (EMMI) 6 ամսվա համար ԵՎՐՈ-ով եվրազոտու միջբանկային առաջարկվող դրույքը որն արտացոլվում է https://www.emmi-benchmarks.eu/euribor-org/euribor-rates.html էջում կամ Արմսվիսբանկ ՓԲԸ տնային կայքէջում: Եթե հիմնական ցուցանիշը դառնում է անհասանելի, և անհնարին է դառնում լողացող տոկոսադրույքի սահմանումը հաջորդ ժամանակահատվածի համար, ապա հիմք է ընդունվում երկրորդային ցուցանիշը՝ ՀՑ3[1], որն իրենից ներկայացնում է Եվրոմիության Գանձապետական ուղենիշային պարտատոմսերի 6 ամսվա մինչև մարում եկամտաբերության կորի տոկոսադրույքը, որն արտացոլվում է https://www.ecb.europa.eu/stats/financial_markets_and_interest_rates/euro_area_yield_curves/html/index.en.html էջում:
Վարկի լողացող տոկոսադրույքը Եվրոյի դեպքում՝ կարող է փոփոխվել (բարձրանալ կամ նվազել) հաստատված տոկոսադրույքից առավելագույնը 2%-ով (առավելագույն և նվազագույն շեմ):
Փոփոխական տոկոսադրույքով տրամադրվող վարկերի տոկոսադրույքները, անկախ տրամադրման ամսաթվից, ենթակա են վերանայման կես տարին մեկ՝ փետրվար և հուլիս ամիսների առաջին աշխատանքային օրը, ժամը 12.00 դրությամբ գործող դրույքին համապատասխան, ընդ որում, փոփոխությունն ուժի մեջ է մտնում վերջինիս մասին հաճախորդին ծանուցելուց 7 աշխատանքային օր հետո: Որոշ դեպքերում, պայմանագրով կարող են սահմանվել տոկոսադրույքի վերանայման այլ ժամկետներ: